

ՄԵԼԱԴԱ ԱՂԱԲԵԿՅԱԼ

2015 թ. հուլիսին վախճանվեց ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի առաջատար գիտաշխատող, բանասիրական գիտությունների թեկնածու Մելադա Անդրանիկի Աղաբեկյանը:

Նրա վաստակը բավականին շոշափելի է վերջին երկու-երեք տասնամյակների հայ լեզվաբանության զարգացման մեջ: Ավարտելով Երևանի պետական համալսարանի ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետի ֆրանսիական բաժինը, ասպիրանտական ուսումնառություն անցնելով լեզվի ինստիտուտում՝ ակադ. Գ. Ջահուկյանի գիտական ղեկավարությամբ նա մասնագիտանում է հայերենի համեմատական ուսումնասիրություն մեջ: Հետագայում այդ բնագավառում հասավ զգալի հաջողությունների՝ քննելով տարածքային լեզվաբանության, պատմական բարբառագիտության, հայ-իտալական և հայ-ուրարտական լեզվական առնչությունների ուշագրավ հարցեր:

Մ. Աղաբեկյանը մասնագիտացել էր հնդեվրոպական լեզուների տարածքային (արեալային) ուսումնասիրության մեջ՝ գրելով «Հայ-իտալյան բառային զուգաբանություններ» թեմայով թեկնածուական ատենախոսություն:

Նա գրեց նաև մի շարք ծավալուն աշխատանքներ, որոնք լույս տեսան տարբեր ժողովածուներում՝ «Հայ-իտալյան բառային զուգաբանություններն» (Հայերենի համեմատական քերականության հարցերն, պրակ 1, Ե., 19), «Հայերենի համեմատական հնչյունաբանության հարցեր» («Հայոց լեզվի համեմատական քերականության հարցեր», պրակ 2, Ե., 1998թ.), «Սյունիք-Արցախ տարածքի բարբառների պատմական հնչյունաբանություն» («Հայերենի բարբառագիտական ատլաս», պրակ 3, Ե., 2010):

«Հայոց լեզվի համեմատական քերականության հարցեր» աշխատության մեջ Մ. Աղաբեկյանը անդրադարձել է հայերենում

հնդեվրոպական ձայնորդների դիրքային տարբերակների արտացոլմանը, ինչպես նաև նախապատմական շրջանի բառային շեշտի բնույթի և գործառության հարցերին: Հեղինակ է գիտական հանդեսներում լույս տեսած բազաթիվ արժեքավոր հոդվածների. «Տարածքային բառագուգաբանությունների սահմանման սկզբունքները», «Հնդեվրոպական բուսանունները հայերենում», «Հնդեվրոպական \*w բաղաձայնը հայերենում», «Հնդեվրոպական ձայնավոր և ձայնորդ \*u-ն հայերենում», «Շեշտը և նրա հետ կապված հնչունական փոփոխությունները նախապատմական շրջանի հայերենում», «Հնդեվրոպական \*l-ի արտացոլումը հայերենում», «Ղարաբաղի բարբառի հնչությային համակարգի զարգացումը» (թեզիսներ), «Հայերենում \*bh, \*b, \*p > ւ (վ, ու) հնչյունափոխությունը և նրա ժամանակագրությունը», «Հայերենի գլոտացած բաղաձայնների խնդիրը», «Դիտարկումներ հայերենի հնագույն փոխառությունների վերաբերյալ», «Հայերենի և հնդեվրոպական նախալեզվի կոկորդային հնչյունների աղերսի հարցը», «Հայոց լեզվի բարբառային ձեռագիր նյութերի համակարգչային մշակման խնդիրները» և այլն:

Նա հեղինակ է նաև մի շարք բառերի ծագման վերաբերյալ ուշագրավ հոդվածների, որոնք լույս են տեսել «Ստուգաբանական դիտողություններ. Ցայել», «Ստուգաբանական դիտողություններ. տանու», «Ստուգաբանական դիտողություններ Աղվանք տեղանվան վերաբերյալ», «Քարահունջ. ստուգաբանական դիտարկումներ» թեմաներով:

Մ.Աղաբեկյանը ինստիտուտի հարգված գիտնականներից էր, գիտական խորհրդի հեղինակավոր անդամ, որ նպաստավոր մասնակցություն էր ունենում գիտական հարցերի քննարկումներին, տեսական սեմինարներին:

Մ.Աղաբեկյանի հիշատակը միշտ կմնա ինստիտուտի աշխատակիցների, նրան ճանաչողների սրտերում: